ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 27 >> Մայիսի 2021թ. N ՄՊ/127-2021

ք. Արմավիր

<<ՀԱՑԻԿԻ ԱՎԵՏԻՍ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2021 թվականի ապրիլի 26-ի N ՄՊ/121-2021 և 2021 թվականի ապրիլի 26-ի N ՄՊ/125-2021 որոշումները, <<Հացիկի Ավետիս Բաղդասարյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում փաստաթղթերի հանձնման–ընդունման աշխատանքները կազմակերպելու նպատակով.

որոշում եմ՝

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին (Ն. Սարգսյան)՝ հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել <<Հացիկի Ավետիս Բաղդասարյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության հաշվապահ Արմինե Մկրտչյանին (համաձայնությամբ):
3. Հանձնաժողովին (Ն. Սարգսյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել հինգ աշխատանքային օրվա ընթացքում և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի քարտուղարության վարչատնտեսական բաժնին (պետ Ա. Համբարձումյան)՝ աշխատանքներն իրականացնելու համար ապահովել հերթապահ մեքենայի տրամադրումը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ ***Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ***

Էլեկտրոնային ստորագրություն

VERIFIED OCSP 27.04.2021 14:54:25 GMT+4

Подписано: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230

Հավելված

Հայաստանի Հանրապետության Արմավիրի

մարզպետի 2021 թվականի Ապրիլի 27-ի

N 178/127-2021 որոշման

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

Հանձնաժողովի նախագահ՝

Ն. Սարգսյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի պետ

Անդամներ՝

Ջ. Եղոյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի ավագ մասնագետ

Գ. Գևորգյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի ավագ մասնագետ

Հանձնող՝

Տաթևիկ Մկրտչյան - <<Հացիկի Ավետիս Բաղդասարյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության նախկին տնօրեն

Ընդունող՝

Աննա Մանուկյան - <<Հացիկի Ավետիս Բաղդասարյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Неквалифицированная подпись

VERIFIED OCSP 27.04.2021 12:54:06 GMT+4

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023